

թեան համար հրաշակերտ մը: Արդէն ծանօթ են խորհրդապատկերները Ս. Մատթէոսի և Ս. Ղուկասի որմեզ թողած են Փրկչին կրկնակ ազգաբանութիւնը: Այս խորհրդապատկերին պերճախօս եւ խորհրդաւոր վկայութիւնը ցոյց կուտայ այն տեղը ուր ծնաւ Ս. Կոյսը, յայտարարելով իր հօր և նախնեաց անուանելը. «Որ Հեղեայն... որ Ագամայն»:

Վերջին աստիճան հետաքրքրական ուրիշ նուիրագիր — խորհրդապատկեր մը գտնուած է հսն վերջին ժամանակները: Անոր բացատրութիւնը կարելի է գտնել Martigny ի “Dictionnaire des Antiquités Chretiennes», գիրքին մէջ, և պիտի տեսնուի որ քարը անգամ մըն ալ լեզու կ'ելլէ յայտարարելու Ս. Յովակիմ — Աննայի եկեղեցւոյն հնութիւնը և գոյութիւնը անոր մէջ կըրկնակ գերեզմանի մը: Ս. Յովակիմայ և Աննայի եկեղեցւոյն դրան աջ կողմը կը հանդիպինք չքակահի մը, որուն վրայ կը գտնուի քրիստոնէական առաջին դարերու պարզ բայց զարմանալի մէկ խորհրդանշանը: Շքակահը կը ներկայացնէ տարածութեամբ եւ ձեւով անհաւասար երկու սանտալներու լայնքին վրայ գըրուած թղթապատատ մը (volumen):

Սանտալները նմանութիւն մըն են այն ոսկերուն՝ զոր քրիստոնեաները կը քանդակէին գերեզմաններուն վրայ: Արդ, ըստ Martigny ի, այս հազուագիւտ և հետաքրքրական խորհրդանշանը ցոյց կուտայ գերեզման մը: Արդարեւ ի՞նչ կը նշանակէ այս խորհրդանշանը: Հնախօսները զանազան կերպով կը պատասխանեն, օրինակի համար, այսինչը չուած է իր վերջին բնակարանը, կամ աւելի ևս, սովորական լեզուի մէջ գործածուած մեղմաբանութեան մը համաձայն, «մեռած է»: Սանտալներու զանազանութիւնը ցոյց կուտայ